ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հունիսի 2011թ. **N__-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 28-րդ կետի 4-րդ ենթակետով և 2010 թվականի. նոյեմբերի 26-ի N162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի սեփականություն համարվող Երևանի Նորաշեն հ.34 շենքի 34.0քմ մակերեսով հ.121 ոչ բնակելի տարածքն /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 30.04.2010թ. հ.2690642 վկայական/ անհատույց օտարել /նվիրել/ Վանյա Հարությունի Վարդանյանին /անձնագիր՝ AB0387725, տրված 18.01.1997թ. 012-ի կողմից/։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արցախյան պատերազմի մասնակից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանության և ազատագրման մարտերին մասնակցած Վանյա Հարությունի Վարդանյանը բնակվում է իր որդու՝ 2-րդ խմբի հաշմանդամ Վահե Վարդանյանի հետ՝ տնտեսական կարիքների համար 2002 թվականին Աջափնյակ թաղային համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների հիման վրա վարձակալությամբ տրամադրված Նորաշեն հ.34 շենքի տակ գտնվող ոչ բնակելի տարածքում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի N604-Ն որոշմամբ՝ Երևան քաղաքի վարչական տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերի չսեփականաշնորհված բնակարանները համարվել են Երևան քաղաքի սեփականությունը: Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետի՝ գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Վանյա Հարությունի Վարդանյանին ոչ բնակելի տարածք հատկացնելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականությունը համարվող ոչ բնակելի տարածքն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ առաջանում է «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքն անհատույց օտարելու մասին» Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականությունը համարվող ոչ բնակելի տարածքն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ Երևան համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ